

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ»:
կամ Tiflis. Rédaction «Mschak»:

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

Հի Մ Ն Ա Յ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԱՌԱՋԻԿԱՅ 1895 ԹԻԱԿԱՆԻՆ

23-րդ ՏԱՐԻ

23-րդ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն գիրքով, նոյն պրոգրամով և նոյն ուղղու-
թեամբ: Մեր ստանում ենք տեղական Հեռագրերը:

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուս ստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և
մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., յոթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ.,
հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսա-
կանը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿ» գրվել կարելի է ԽՊՐԱԿԱՆԱՆԸ (Խաղաղության և Բարոնական փողոցների անկիւն):
Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելիս, պէտք է գիտնել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ
արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK»:

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

Հեռագրիներ թիւրքաց հայերի մասին. Կ. Պոլս-
ից ստացված հեռագիրը. երկու տարի անցաւ:
Մամուլի կարծիքը թիւրքաց հայերի հարցի մա-
սին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի արժանա-
ւոր ներկայացուցիչներ. Հոգեհանգիստ Գրիգոր
Արծրունու յիշատակին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բերլինի դաշնագիրը. Նամակ
Թիւրքիայից. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարս-
կաստանից.—Հեռագրեր.—ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գրիգոր Արծրունի և
Թիւրքաց հայերը:

ՀԵՌԱԳՐՈՒՆԵՐ ԹԻՒՐԲԱՅ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ (Հեռագրով)

Մեր թղթակիցը, ղեկավարելով 18-ին,
Պետերբուրգից մեզ հեռագրում է հետե-
ւեալը:

«Լ. օ. զ. օ. ի. յ. «Новое Время» լրագրին
հեռագրում են, որ մեծ տպաւորութիւն է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՒ ԹԻՒՐԲԱՅ ՀԱՅԵՐԸ

(Երկրորդ տարեգրքի առիթով)

Միշտ հաւատարիմ մնալով իր լայն ծրագրին,
տաղանդաւոր հրատարակիչստ իր գրական գոր-
ծունէութեան շրջանում ոչ միայն անտես չարա-
ծիւրքաց հայերին, այլ և իր ուղղութեան ա-
մենափայլուն առարկան դարձրեց:

Նա այլապէս վարվել չէր կարող, որովհետեւ
ըմբռնում էր այն վտանգաւոր կացութիւնը, որին
ենթակայ էր մի քանի միլիոն հայ տարրը Թիւր-
քիայում, նոյն իսկ հեռուից զգում էր այն խեղ-
զող միջնորդի դարձութիւնը, որի ապականված
հոսանքի մէջ լողում էր այդ տարրը, պատմական
բաղդի այդ թշուառ խաղալիքը:

Բայց ինչ էր այդ կացութիւնը:

Մի կողմը. Կ. Պոլսում—Թիւրքաց հայերի
մտաւոր կենտրոնում—անշարժութիւն և մեռելա-
յին անտարբերութիւն էր տիրապետում.—Լա-
գրութիւնը ժամանակի օգուց միանգամայն յետ
կանգնած՝ դատարկ և անբուխ զգաց. երկասար-
գութիւնը իր բոլոր ձգտումներով դանդաղան
գծուծ հաշիւներով, մանր խմբաւորներով շարժւոյն
էր պատկուցում, կամ տիրացուական վէճերով էր զբաղ-
ված. սմբռանքի ջանքով և անբուխ խմբաւոր
ները իր գլուխը բարձրացնելու փորձեր էր անում:
«Ազգային» մեծագործը անունով մկրտված սահ-
մանադրութիւն ընկել էր և թղթի վրա միայն
գոյութիւն ունէր. իսկ գաւառացիների անմը-
ւուն ընդդէմ ոչ մի արձագանք չէր գտնում:
Վոսփոքի փակումը...

գործում այն հանգամանքը, որ Թիւրքիան
ընդունել է հայերով բնակեցրած տեղերը
միայնակ և այդ տեղերից ինքնավար շըր-
ջան կազմելու նախադիմքը, Ֆինանսների,
Հասարակական աշխատանքների և զարդ-
ների առանձին վարչութիւններով, որոնք
անմիջապէս ենթակայ էր իննսն սուլթանին
և Բ. Դարանը: Այդ ազդուութեամբ Բոլոր
պարտական է Բերլինից սուլթանին տուած
խորհուրդներին:

«Լ. օ. զ. օ. ի. յ. Պարսից հայերը պատ-
գամաւորութիւններ ուղարկելին Գաղս-
տօնի մօտ՝ շուրջաւարելով նրա ծննդեան
օրը:

«Բ. Ե. ի. ի. յ. «Berliner Tageblatt» լրագրի-
րը հակադրում է բրիտանական զիպլոմա-
տիայի վարմունքին Ռուսաստանի զգուշու-
թիւնը և պատմում է, որ Ռուսաստանի
ղեկավար Նեխոլով, սուլթանի հետ ունեցած
խօսակցութեան ժամանակ, կորական կեր-
պով հերքում էր Ռուսաստանի թշնամա-

Միս կողմը, Թիւրքաց Հայաստանում, Թիւրք
պաշտօնականների անարդարութեան, առաջակա-
րայ քրդերի հարստահարութեան և վերջապէս ընդ-
հանուր տղիտութեան շնորհիւ ժողովուրդը ստրկա-
ցած, նրա անտեսական դրութիւնը քաջալոված,
ճանապարհներ անապաճով, առետրի և արդի-
նաբերութեան ասպարէզները փակված, իսկ մը-
տաւոր և բարոյական առաջադիմութեան
աղբիւրները իսպառ ցամաքած:

Այսպիսի ուրեմն մի տեղ տանջանք, խաւար
թշուառութիւն, միւս տեղը յուսահատ թմրու-
թիւն և անգործութիւն:

Արծրունի չէր կարող, ի հարկէ, անտարբեր
մնալ ղեկի իրերի այն դրութիւնը: Սակայն նա
իր ցաւակցութիւնը ուրիշներին նման արուես-
տական օգրերով, տխուր երեմականներով չար-
տալայտեց, վերացական թուիքներ չարաւ, օղա-
յին համբոյններ չուղարկեց ղեկի Հայաստան...

Այս ղեկը մնալ էլ նա ձեռք առաւ քննադա-
տական խիստ մէթոդը:

Նա սկսեց ամենախիստ քննադատութիւնից,
որին հետեցին մի շարք հիմնական մտքեր և
ծրագրեր:

Անվեհեր հրապարակաբօսը իր արշաւները
սկսեց նախ թիւրքահայերի մամուլի ղեմ-
քրքրելով սրա բազմակողմանի պակասութիւննե-
րը՝ պահանջում էր, որ նա իր կոչման բարձրու-
թեան վրա կանգնի, ժողովուրդի դառն ցաւերի
արտայայտիչ լինի—կրօնական անհամ վիճաբա-
նութիւնների ասպարէզ դառնալու փոխարէն
հասարակական հասուն խնդիրներ արծարծէ, դա-
ւառացիների կենսական կարիքների առաջ խույ-
ջը մնայ...

Պախարակելով Կ. Պոլսի «գաղափարաւոր» Է-
ֆէնդիւնի և իր, «Թեթևասրկ» և «հացկատակ»

կան զիտաւորութիւնների զոյւթիւնը և
ասում էր, թէ հայոց հարցում ուսաց
զիպլոմատիւն լոյալ (օրինական) կերպով է
գործում, և միջոցներ է ձեռնարկում, որ-
պէս զի Թիւրքիայում յուզմունքների սաստ-
կանալու առաջն առնի:

Մօսկվայից, մեր թղթակիցը մեզ
հեռագրում է ղեկավարելով 18-ին:

«Հայաստանում տեղի ունեցող վերջին
ղեկերի առիթով «Курьер» լրագրը
տպագրեց մի ընդարձակ, համակրական
յօդուած, որի մէջ նկարագրվում է բազ-
մաշարքար թիւրքահայ ժողովրդի պատմա-
կան վիճակը մինչև մեր օրերը»:

Կ. ՊՈԼՍԻՑ ՍՏԱՅՎԱՅ ՀԵՌԱԳՐՈՒՆԵՐ

Թիւրքաց կառավարութիւնն առաջին
քայլին արեց:

Գոնէ այդպէս է երևում այն հեռագրից,
որ մեր ստացածը ղեկավարելով 18-ին, կի-
րակի օրը, «Հիւսիսային գործակալութեան»
միջոցով, Կ. Պոլսից, որը և անմիջապէս
տպագրելով, նոյն օրը տարածեցինք Թիֆ-
լիսում Ա.Տ. այդ հեռագիրը:

Միմիտրիների վերջին խորհրդում, որ
գումարված էր պալատում, Կ. Պոլսում,
սկզբունքով ընդունված է մի նախադիմք,
որով երկրում, Վանի, Բիթլիսի և Մուշի
վիլայէտներից պէտք է կազմել մի վիլա-
յէտ, սուլթանից նշանակված նահանգապե-
տով՝ 5 տարով:

«Առաջին նահանգապետը պէտք է լինի
մահաթափան, իսկ հետեւեալ նահանգա-
պետները կը նշանակվեն քրիստոնեաներից,
բայց ոչ հայերից»:

Տեղական ժամրամբերիւն կը լինի սուլ-
թանից նշանակված ղեկավարի գնեւրալի
հրամանատարութեան տակ:

Ինտելիգենցիային, նա շարունակ կրկնում էր,
որ ցնորք է վոսփոքի փակումը նստած, փըռն
ճառեր արտասանելով մի բարերար աղղկեցութիւն
ունենալ այն երկրի վրա, որ իրանց համար
մի կատարեալ անյայտութիւն է:

Խօսելով Թիւրքաց հայերի «սահմանադրու-
թեան» մասին՝ յայտնում էր, որ զեղ մի խա-
ղալիք է Կ. Պոլսի բուրժուա դասակարգի և հո-
ղեւորակներին ձեռքում, և որ ժողովուրդը ի-
րական ոչ մի ձեռքում չէ վայելում յանուն այդ
սահմանադրութեան: Այդ պատճառով նա պաշտ-
պանում էր սահմանադրութիւնը վերաքննելու
միտքը, որով առաջարկվում էր նորանոր փոփո-
խութիւններով լայնացնել ժողովրդի ներկայացու-
ցիչների իրաւունքները, որպէս զի նրանց կեն-
դանի բողոքը անուշի չը մնայ, նրանց բազմա-
թիւ կարիքներին բաւարարութիւն տրվի:

Բացի դրանից նա միշտ պնդում էր թէ՛ ան-
հրաժեշտ է Ազգային ժողովը Կ. Պոլսից տեղա-
փոխել Թիւրքաց Հայաստանի կենտրոնական քա-
ղաքներից մէկը՝ Վան կամ Էրզրում, որովհետեւ
միայն տեղական պահանջներին յարմարվելով՝ այդ
ժողովը կարող էր մի իրական ծառայութիւն
մատուցանել ազգին: Այս միտքը նա մի առան-
ձին օգնութեամբ պաշտպանում էր մանաւանդ
Բերլինի կօդերէսից յետոյ, երբ ստացվեց 61-րդ
յօդուածը:

Հարաւածելով Կ. Պոլսի կրօնական հաստա-
տութիւնների դանդաղութիւնը, նա առա-
ջարկում էր արժանաւոր հովիւներ ուղարկել
Հայաստանի խուլ անկիւնները՝ ժողովրդի մէջ լու-
սաւորութիւն տարածելու և վերջապէս այնտեղ
բոյն դրած դանադան կրօնական պրօպագանդանե-
րի դէմ կռուելու համար:

Ընդհանրապէս խօսելով Կ. Պոլսի մասին՝
նրան անուանում էր «մի կոյնիւս», «կենդանի

«Վիլայէտից ստացվող եկամուտները կը
գործադրվեն տեղական կարիքների համար,
ի բաց առնելով մի յայտնի գումար, որ
պէտք է մտնի պետական պարտքի վարչու-
թեան կամ ծխախոտի ըէֆիի մէջ»:

«Դատաւորները ընտրվել կը լինեն, ի
բաց առնելով դատարանների նախագահ-
ները, որոնք կը նշանակվեն այժմ գոյու-
թիւն ունեցող օրէնքների հիման վրա»:

Թիւրքաց բարձր կառավարութեան այդ
քայլը, այդ խոստովանութիւնը, թէ ան-
հրաժեշտ է ընթացիկ մացերը ինչպէս
երևում է Պետերբուրգի մեր այսօրվայ հե-
ռագրից, քաղաքական շրջաններում շատ
լաւ տպաւորութիւն է թողել:

Դա առաջին քայլն է: Տեսնենք ինչ կը
լինի երկրորդ քայլը:

ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԱՆՅԱՒ

Երկու տարի անցաւ այն օրից, երբ
կովկասը, վշտացած արտով և վշտա-
ցած սրտից բղխած բուռն համակրական
ցոյցերով հողին յանձնեց իր սիրած գործողի
մարմինը...

Հայը միայն թաղել զիտէ,—ասում էր
շատ անգամ ինքը Գրիգոր Արծրունին: Սա-
կայն այս անգամ նոյն հայը ցոյց տուեց,
որ ճշմարիտ է՝ զիտէ թաղել բայց սովորել է
արդէն թաղելուց յետոյ էլ յիշել թաղվա-
ծին, օգնութիւն նրա անունով, նրա գործի-
ւոյն նրա գաղափարներով...

Եւ ճշմարիտ, Արծրունու անունը ոչ թէ
միայն չը նստեցաւ մեր ժողովրդի յիշո-
րութեան մէջ, ոչ թէ միայն մոռացութեան
չը տրվեց, այլ ընդհակառակն, նրա անու-
նը օրէնցօր դառնում է աւելի զբաւիչ, ա-
ւելի ղիւթիչ, աւելի ազդու, և այսօր հա-
զարաւոր հայեր, կիսաքիչ զանազան երև-
ւոյթների առաջ, դանազան ղեկերում ան-

կազմուածքից անջատված մի մաս. այդ պատ-
ճառով էլ դժուարանում էր Թիւրքաց հայերի վե-
րածնութեան նկատմամբ որ և է վարդապետ ան-
կալութիւն ունենալ այնտեղից...

Կ. Պոլսից, հայութեան այդ խորթ միջավայրից
հեռու, նա ուղեկց իր կարեկից հայեացքը ղեկի
մայր-երկրի, ղեկի Հայաստան: Եւ ահա մի կող-
մից «Մշակ» միջոցով տալիս է այդ երկրի հայ
ժողովրդի անտեսական և բարոյական դրութեան
ճիշդ նկարագիր, իսկ միւս կողմից այդ նկարա-
գրութեան մէջ ամփոփված փաստերի վրա հիմն-
վելով՝ առաջ է բերում ընդհանուր, հասարակա-
կան հարցեր, յուզում, արժարծում է կենսական
խնդիրներ:

Այսպէս՝ Թիւրքաց-Հայաստանից կրկնվող դադ-
թականների անդադար հոսանքը առիթ է տուել
նրան մի քանի անգամ զբաղվել գաղթական-
նութեան հարցով: Եւ նա ամենալուրջ կեր-
պով պարզել է հայ ազգի ապագան սարսափեց-
նող այդ վտանգաւոր երեւոյթի շարժառիթ-
ները: Տաճկահայերի գաղթականութիւնը նա չէր
համարում մի բնական պատահական հիւան-
դութիւն, այլ արմատական շատ խոր պատճառ-
ներից առաջացած մի անխուսափելի երեւոյթ, որ
սերտ կապ ունի երկրի սօցիալական պայմանե-
րի, անտեսական դրութեան, և մանաւանդ տիրա-
պետող իշխանութեան պետական կազմակերպու-
թեան հետ:

Հետեւելով այն սկզբունքին՝ թէ «մի որ և է
երկրի քաղաքական վիճակը լաւ ըմբռնելու հա-
մար՝ նախ պէտք է ղիտել և ուսումնասիրել նոյն
երկրի անտեսական կողմից».—Արծրունին մի
առանձին հետազոտութեամբ արծարծեց Թիւր-
քաց Հայաստանի տնտեսական դրու-
թեան կարևոր հարցը: Նա ցոյց տուեց թէ

դադար կրկնում են՝ Ալիս, եթե կենդանի լինեիր Արծրունին, ախ, եթե էլի մի քանի տարի ապրէր նա՝

Կա արուեստական սէր չէ, և ոչ էլ պատահական յիշատակութիւն: Այնքան կենդանի է ստիպում ամեն րօպէ յիշել այդ անունը: Եւ ամեն անգամ, երբ հայոց կենդանի մէջ առաջ է դառնում մի գիտար մեծ մենտ, կամ մի ուրախ շարժում, հայոց հասարակութիւնը ակամայ յիշում է այն անունը, որ անխղիղ կերպով կապված է այդ շարժումների հետ:

Ինչ հարց ուղում էք վերցրէք, լինի դա մի փոքրիկ խնդիր, թէ մի ահագին, պատմական հարց, լինի դա ընտանեկան, դպրոցական հարց, թէ մի այնպիսի մեծ հարց, ինչպիսին թիւրքաց հայերի խնդիրն է, որը այս րօպէին աղկոծում է ամբողջ քաղաքական աշխարհը, ամեն տեղ լսվում է Արծրունու ձայնը, ամեն տեղ դեռ թարմ է նրա յայտնած միտքը, նրա տուած ուղղութիւնը, նրա ազդեցութիւնը...

Ահա թէ ինչու մի որ և է աջողութեան, մի որ և է հասարակական ուրախալի շարժման ժամանակ, ժողովուրդը կամայ ակամայ յիշում է այդ անունը, որ ամենից շատ իրաւունք ունէր ուրախանալու, և ակամայ բացականչում է՝ «Ալիս, եթե կենդանի լինէիր Արծրունին»:

Այո, նրա անունը կապված է հայի առաջադիմութեան, հայի իղձերի, հայի յոյսերի հետ, և նա չի մոռացվի, այլ սերնդից սերունդ կանցնի...

Եւ անկասկած, ապագայ սերունդը, քսաներորդ դարու հայոց սերունդը, մտաւոր և կուլտուրական կենդանի աւելի բարձր աստիճանների վրա կանգնած, երբ իր երեսը կը դարձնէ դէպի մեր ժամանակները, դէպի 19-րդ դարու խաւար, նոյն իսկ ապագայ սերնդի կարծիքով վայրենի ժամանակը, նա կը յափշտակվի, կը սքանչանայ, տեսնելով խաւարի և անգիտութեան այս շրջանում մի մարդ, որ Ֆանատիկոսի ողորդութեամբ աջ է ձախ կուլու էր մըրզում յանուն մտքի, անձի և դաշտափարի ազատութեան, կանչելով ամենքին դէպի առաջ, դէպի յոյս...

Եւ գուցէ ապագայ սերունդը աւելի կը գնահատէ նրան, քան թէ ժամանակակից սերունդը ընդունակ եղաւ գնահատելու:

Այդպէս է վիճակված մեծ մարդկանց: Խ. Մ.

ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ ԹԻՒՐԿԱՅ ՀԱՅԵՐԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Գերմանական «Nord. Allg. Zeitung» լրագիրը հրատարակել է թիւրքաց զենադէսութիւնից ուղարկված հետեւեալ տեղեկութիւնը: «Köln. Zeitung», լրագիրը իր կիրակի օրվայ համարի մէջ տեղ է տուել մի յօդուածի, որի մէջ այն միտքն է յայտնուում, որ իբր թէ թիւրքիայում քրիստոնեաների դրութիւնը ընդհանրապէս և հասցիները մասնաւորապէս՝ անմխիթար է: Ինքնին թիւրքաց զենապետութիւնը յայտարարում է, որ յօդուածի մէջ առաջ բերած մեղադրանքները միանգամայն հնարովի են: Շատ ցաւալի է, որ ինչպէս լրագրի նման նշանակութիւն ունեցող օրգանը տեղ է տուել այդ տեսակ չարամիտ յարձակումներին, որ հնարին են անբարեմիտ անձինք: Առաջ բերելով այդ խօսքերը, Կիօնի լրագիրը ասում է, «Ստիպված ենք ամենալուրջ կերպով անհիմն համարել թիւրքաց զենապետութեան այդ լեզուն: Գերմանիայի թիւրքաց զենապետութիւնը չը բերէ իրերի դրութիւնը Հայաստանում: Նա չէ կարող սեփական կարծիք ունենալ: Եթէ նա այն նկարագրութիւնը, որը առաջ է բերված չեղանդով, թէ հիդրանը ծառօթ է երկրի և բնակիչների վիճակի հետ, գտնում է միանգամայն հնարովի, այն ժամանակ նրա բացասական բացատրութիւնը զուրկ է ամենաշնչին նշանակութիւնից անգամ: Շատ տարիններից ի վեր «Köln. Zeitung» լրագիրը յայտնի է եղել դերմանական մամուլի մէջ իբրեւ ամենաթիւրքասէր թերթ: Նա ունեցել է շատ նշանաւոր աշխատակիցներ և դեռ այսօր էլ ունի, որոնք անպայման կարող են հաստատել, որ նրանք թիւրքաց պետութեան զանազան մասերի խաւան պրութիւնը լինելով լաւ դիտելու, քան թէ արտասահմանում ապրող որ և է թիւրք դիպլոմատ: Զամենայն դէպս նա բաց է ի բաց յետ է դարձնում այդ անհասկացատունութիւնը, երբ ճշմարտութեան համապատասխան նկարագրութիւնները ժելտափում են իբրեւ «չարամիտ մարդկանց չարամիտ յարձակումներ»: Այդ տեսակ վարմունքը տաճկաց գործին վնասել կարող է միայն»:

Անկասկած, Կիօնի նշանաւոր լրագրի այդ որոշ և խիստ պատասխանը ահագին տպաւորութիւն կը թողնէր թէ մամուլի և թէ դերմանական հասարակութեան վրա, մայրենի երկիր և ձգտում դէպի անհատական ազատութիւնը:

... Թող չը մոռանան թիւրքիայի հայերը, թող լաւ հասկանան, ասում էր նա 1876 թվին, որ այսօր, այս երկու ամսվայ ընթացքում ամենայնպէս ժամանակն է խաղաղ ճանապարհով պահանջել իրանց համար ամենամահաբեղտ մարդկային իրաւունքները, սահմանադրարմ միջոցն է դիպլոմատիական ճանապարհով իրանց ճնշված, թշուառ, անտեսելի դրութեան մասին լսել տալ Եւրոպային, ներկայացնել իրանց դրութեան ճիշդ նկարագիրը լինելի և եւրօպական կօնգրէսին և պահանջել այն իրաւունքները, որոնցից մինչև այժմ զուրկ են միացել շնորհիւ իրանց սպէս և գործին անպատրաստ առաջնորդներին:*)

Այսպէս էր մտածում հեռաւոր հրապարակաւորը դեռ մի ժամանակ, երբ Ներսէս պատրիարքը և նրա հետ Կ Պոլսի ազգային վարչական մարմինները դեռ ուրիշ գոյն ունէին...

Հանդիսանալով «Արարատեան» ընկերութեան ամենամանկուն հովանաւորող Արծրունի անգլիկ զարկ տուեց տաճկահայերի լուսաւորութեան և ուսումնարանական գործին, որովհետև այդ նոյն ընկերութեան ջանքերով վասպուրականի խաւար անկրկններում հետզհետէ կազմակերպվեց մի շատ պիտանի սերունդ:

Եւ առհասարակ տաճկահայերին համարելով խաւար Արիստոմ եւրօպական քաղաքակրթութեան բարիքները սերմանող ապագայ կարապետներն են: Նրանց առաջադիմութեան և կուլտուրական զարգացման արգելադիր խոչընդոտներին նա եմբարկում էր ամենախիստ ընտաղատութեան՝ իր թէ ընդհանուր ընտաղութիւն կողմ քաղաքական

մանաւանդ որ այդ լրագիրը միշտ յայտնի է եղել իբրեւ թիւրքիայի կողմնակից և պաշտպան:

Լօնդոնից հեռագրում են, որ հայոց հարցի առիթով ռուս մամուլի յայտնած կարծիքներից «Daily News» լրագիրը այն եզրակացութիւնն է հանում, որ ռուսաց մամուլը սկզբունքով ընդունում է Փաքը-Ասիայի հայկական նահանգների վարչական սխաւմի կերպարանափոխութեան անհրաժեշտութիւնը:

Լօնդոնում ապրող մահմետականները, այսինքն թիւրքերի, ինչուսների, մալայացիների և աֆրիկացիների ժողովը կայացրեց մի վճիռ, որով բողոքում է Հայաստանում ազատամբութիւնը ճնշելու առիթով մահմետական կրօնի և օրէնքի դէմ արած կեղծ մեղադրանքների դէմ և զայրոյթով մերժում է հայկական հարցը, որ բուն քաղաքական դրոճ է, կրօնական հարց դարձնելու ամեն մի փորձը:

Անգլիական «Times» լրագիրը տպեց մահմետական միտնդի նախագահի նամակը: Այդ նամակի մէջ նախագահը հայտնէր շրջանների պնդումները զրգարաւթիւնէ մահմետականութեան Գոտ-Կնիդայի մահմետականները տանջվում են իրաւունքների նոյն սահմանափակումներից, ինչպէս և քրիստոնեաները թիւրքիայում:

Պանիշլամարն ընկերութիւնը ամեն տեղ միտնդներ է կազմում: Այդ միտնդների կողմից մի առանձին պատգամաւորութիւն կը ներկայացնի լոյր Կիմբրէլին մի որոշում, որի մէջ մահմետականները միջնորդում են, որ անգլիացիները պաշտպանեն մահմետականներին Փաքը-Ասիայում: Միտնդներում, բացի դրանից, որոշված է բողոքել քրիստոնեայ պետութիւնների միջամտութեան դէմ յիշեցնելով մահմետականների կրած տանջանքները Բոլշարիում:

Անգլիական «Standard» լրագիրը հաղորդում է, որ Բրուսայում տեղի ունեցան անկարգութիւններ, որոնց ժամանակ շատերն կալանաւորեցին:

Պաշտօնապէս հաղորդվում է, որ Հայաստանում տեղի ունեցած զաւաճութիւնների առիթով կազմված քննիչ յանձնաժողովի մէջ Անգլիայի ներկայացուցիչը կը լինի Միլիտ Եիպլէյ, այժմեան բրիտանական փոխ-հրկապտոսը Մոնաստիւում:

յօդուածներում և թէ լուրջ և ծանրակշիւ առաջնորդողներում...

Օգտւած քաղելով Կ. Պոլսում տիրող զրգարաւթաւ խաւարներէն, երկարատեւ աղմուկներից՝ Արծրունին չը զարգաւ ուղադրութիւն դարձնել և արեւմտեան րարաւոր վրա Գրաքարին վերադառնալու սկզբունքը նա, ի հակէ, անմտութիւն էր համարում, բայց և այնպէս ժամանակակից աշխարհաբար (Կ. Պոլսի աշխարհաբարի մասին է մեր խօսքը) մէջ էլ շատ խոշոր պակասութիւններ էր նկատում, օրինակ, լեզուի խրթնութիւնը, ոճի ծանրութիւնը, սխաւաստեղական դարձուածքները, հնչիւնների աղաւաղութիւնը և այլն: Այդ բոլորի փոխարէն նա պահանջում էր պարզ լեզու, թեթեւ ոճ, դիւրաթեք դարձուածք և հնչիւնների ճիշդ գործածութիւն:

Թիւրքաց հայերի մտաւոր և բարոյական վերածնութեան գործը իր սրտի ամենամոտիկ առարկան համարելով՝ Արծրունին չը բաւականացաւ ներկրվել այդ գործին միմիայն գրելով, նա գիտէր յարմար դէպքում և իր գրումները մարմնացնել, տաճկահայերի դպրոցական գործի յառաջագիմութեան, հրկիզեալների, գաղթականների և սովորական օգտին «Մշակի» միջոցով հաւաքված խոշոր գումարները՝ նրա յիշատակը միշտ վառ պահող կենդանի յուշարձաններ կը լինեն թիւրքաց հայերի մէջ...

Այդպէս մի կողմից իր անխնայ ուղղութեան, իսկ միւս կողմից իր գրումների կախարհող և ոգևորող ոճի շնորհիւ՝ Գ. Արծրունին դեռ 70-ական թուականների վերջերից՝ թիւրքաց հայերի շրջանում արդէն մեծ հիշակալութիւն ձեռք բերեց:

Շատ անգամ Կ. Պոլսի հայ ինտելիգենցիայի ամենալաւ ուսումը գործում էին նրա խորհրդով, նրա ցոյց տուած ճանապարհով: Թիւրքահայերի այս կամ այն հասարակական հիմնարկութեան մա-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ԱՐԺԱՆԱԻՐ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐ

Ընդունված է սակը, որ մամուլը կօթերորդ ամե պետութիւն է: Այդ մեծ պետութեան ամենապղծելի և հզօր ներկայացուցիչն է անգլիական «Թայմս» լրագիրը, որի հիմնադիր-հրատարակիչները Եւրոպայի յայտնի հարստութիւններից միմն են կազմում:

Նրբերում Լօնդոնում վախճանվեց այդ հարստութեան գլուխը, «Թայմսի» խմբագիր-հրատարակիչ՝ Ջոն Վալտեր III-ը, Վալտեր I-ի, «Թայմսի» հիմնադրի թոռը:

Եւրոպական մամուլը ամենամանրամասն տեղեկութիւններ է հաղորդում Վալտերների կենդանի, բնաւորութեան մասին և շատ կողմերից լուսաբանում է նրանց կենսագրութիւնը:

Կարգալով այդ կենսագրութիւնը, «Թայմս» լրագրի հիմնարկութեան պատմութիւնը, ինքն ըստ ինքեան մեր մտքի մէջ առաջանում է համեմատութիւն «Թայմսի» և «Մշակի» հիմնադիրների՝ Վալտերի ու Գրիգոր Արծրունու մէջ:

Խնդրում ենք մեր միտքը սխալ չը հանկանալ: Մենք չենք կամենում ասել դրանով, որ «Մշակը» նոյնն է, ինչ որ «Թայմս» լրագիրը: Այո, միայն այս երբ կամենում ասել, որ այդ երկու լրագիրների և նրանց հիմնադիրների բնաւորութեան ու գործունէութեան մէջ համեմատութեան և նմանութեան շատ կէտեր կան: Եւ այդ չնոք հիւ այն հանգամանքի, որ այդ երկու լրագիրների հիմնադիրների խաւարակտէրիստիկայի մէջ նմանութեան շատ դեպք են եղել:

«Թայմս» լրագիրը սկսվել է հրատարակվել Անգլիայում 1788 թվին, մի այնպիսի ժամանակ, երբ նոյն իսկ ամենալրված մարդիկ լրագրի վրա նայում էին արհամարհանքով և լրագրական գործով դարգվելու լուրջ և օրինաւոր մարդուն վախկ պարագմունք չէին համարում: Ճիշդ նոյնպիսի հանգամանքների մէջ սկսեց հրատարակվել «Մշակը», 1872 թվին, այսինքն այնպիսի ժամանակ, երբ հայ լրագրական գործով դարգվելու ծիծաղ էր յարուցանում հայ հասարակութեան առաջնակարգ և զարգացած դասի մէջ:

Ջոն Վալտերը, «Թայմսի» հիմնադիրը, մի վերին աստիճանի յամուռ, հաստատակամ և անյողորդ բնաւորութեան տէր անձն էր: Նա մի նշանաւոր անգամ չէր փոխում իր հայեաքները, չէր զիջանում երբեք ոչ որի ոչ մի բանի մէջ, ոչ մի ժամանակ, նա

սին նրա յայտնած կարծիքը երբեմն անմիջապէս վճռական հետեւանքներ էր առաջանում, ապացոյց՝ «Տեստեսական» և «Միացեալ» ընկերութիւնների կազմվելը:

Թիւրքաց հայ ժողովուրդը, հատարակ դասակարգը չը դանդաղեց ճանաչել իր հարադատ պաշտպանին. «Մշակի» ոգևորիչ էջերում նա տեսաւ իր ողորմելի դրութեան նկարագիրը, իր ցաւերի և անպատում թշուառութիւնների պատկերները Արծրունու գրած իրաքանչիւր տողը նա ըմբռնում էր ամենահարգաւոր կերպով. նա զգում էր այդ տողերում արտայայտված և արդար զայրոյթ, և անկեղծ վիշտ և սրտազին կարեկցութիւն. զգում էր, և հետզհետէ քնքր սիրով կապվում աներկիւղ հրապարակախօսի հետ...

Այդ սէրը, այդ համակրութիւնը քանի գնում լայն ծաւալ էր ստանում: Այնպէս որ «Մշակ» Աղանա խօսքը վերապահան մտքի ծնունդ չէ. դա ժողովուրդական այն անփոխարինելի յարգանքի արտայայտութիւնն է, որ ընդունակ է յայտնել միայն տարաբաղ թիւրքահայը:

Արդարև թիւրքահայը պանդիտութեան ցուպը ձեռին թիֆլիսից անցնելիս՝ Արծրունուն դէթ մի անգամ տեսնելով՝ մի երջանիկ բաղաւորութիւն էր համարում, իսկ «Մշակի» խմբագրատուն այցելելով՝ մի նուիրական պարտք:

Երբեք ինտելլեկտ չենք լինի, եթէ յայտնեք բացարձակապէս, որ վերջին տարիները Հայաստանում ոչ մի գործիչ այնքան ժողովրդականութիւն չէ վայելել, որքան Գ. Արծրունին:

Այդ ժողովրդականութեան փոքր արտայայտութիւններից մէկը այն համեստ, բայց վերին աստիճանի խորհրդաւոր պատկեր էր, որ Վասպուրականից պանդիտ մշակները պատիւ ունեցան ներկայացնելու ամամ հրապարակախօսին իր փառաւոր յօդուածի օրը...

Վասպուրականից

*) «Մշակ» 1876 թ. № 41.

իր համոզմունքներն մէջ մի անասան փայլ էր. նրա նշանաբանն էր ասել այն ամենը, ինչ որ կարելի էր համարուած անել, տեղի չը տալով ոչ սպառնալիքներին, ոչ դանադան նկատումներին և ոչ էլ ներթափանց փնտրի առաջ: Նրա լրագրողը կարծում էր, որ և է անհերքելի և հաստատութիւններով, նա ճանաչում էր միայն հասարակութիւնը և նրա շահերը, և հասարակական շահերը ամենալայն արձագանք էին գտնում նրա օրգանի մէջ և լուրջ քննութիւնն ենթարկւում:

Չը նայելով որ «Թայմսը» և ինչ և աւելի պահանջողական, քան ազատամիտ, բայց նա վերաբերվել է բոլոր հարցերին շիտակ, ազնիւ, անխաբիա և կերպով և հենց այդ շիտակութեան մէջ է կայացել նրա հիմնական արժանաւորութիւնը: Ամեն մի անհատ Անգլիայում գիտէ, որ «Թայմսը» անկաշառ և անկախ մի օրգան է, գիտէ, որ նրա մէջ ցոլանում է հասարակութեան արամադրութիւնը և ոչ այս ու այն շարժանք: Ազատական տղեկացութիւնը: «Թայմսը», ասում է մի հրապարակախօս, գիտէ միայն ինչ է կամուհում, և ասում է այն, ինչ որ կամուհում է ասել:

Այս արդ արժանաւորութիւնների շնորհով «Թայմսը» ձեռք է բերել այն անօրինակ և եղաւի ահադին աղբեղութիւնը, որ նա ունի ոչ միայն Անգլիայում, այլ ամբողջ քաղաքակրթւած աշխարհում:

Կարծում ենք, որ «Մշակի» հիմնադիր Գրիգոր Արծրունին ևս իր աւելի քան 20-ամեայ հրապարակախօսական գործունէութեան ընթացքում ձեռք բերած ժողովրդականութիւնը, աղբեղութիւնը և հեղինակութիւնը պարտական էր համայնական արժանաւորութիւններին և յատկութիւններին: «Մշակը» միշտ յայտնի է եղել հասարակութեան, նոյն իսկ հակառակորդներին, իրեն նախադաւ օրգան, որ կարծում էր ունեցել որ և է անձից և հաստատութիւնից. նա ասում էր այն, ինչ որ կամուհում էր ասել, և այդ այնպէս, որ որ և է թիւրիմացութեան, կասկածի տեղիք չէր թողնում: Նա ճանաչում էր միայն հասարակական շահերը և այդ շահերի պաշտպանութեան համար նա չը խնայեց ոչինչ, նոյն իսկ իր ամբողջ կարողութիւնը. ոչ մի բանի մէջ, ոչ մի ժամանակ և ոչ ոքի առաջ նա չը փոխեց իր համոզմունքը, իր հայեցողութիւնը և երբ նա հարկաւոր էր համարում մի բան ասել, նրան ոչ մի բան չէր կարող արգելել այդ բանը ասել:

Այդպիսի անկողն, անյողողող և անսասան բնավորութեան, այդպիսի անխաբիա, անկաշառ և անողիմնող գործունէութեան պատճառով Գրիգոր Արծրունին, «Մշակի» հիմնադիրը կարողացաւ ձեռք բերել այն մեծ և պատուաւոր անունը, այն բարձր հեղինակութիւնը հայերի մէջ, որը կարողացաւ ձեռք բերել Անգլիայում միայն Ջոն Վալտերը, «Թայմսի» հիմնադիրը:

Հ. Ա.

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՆԻՆԻ ՅԻՇԱՍԱԿԻՆ

Երէկ, ամսիս 19-ին, խօջիվանքի գերեզմանատանը կատարվեց հոգեհանգիստ Գրիգոր Արծրունու մահվան երկրորդ տարեդարձի առթիվ:

Հոգեհանգիստին ներկայ էին՝ Թիֆլիսում հիւր գտնվող խորհրդային եպիսկոպոս Ստեփանէ, Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսէսեան, մի քանի քահանաներ և բառականապէս հասարակութիւն:

Հոգեհանգիստը կատարելուց յետոյ խորհրդային եպիսկոպոսը մի քարոզ խօսեց, որ մեծ տպաւորութիւն թողեց հանդիսականներին վրա: Խօսելով այն մասին, թէ որքան բաղմամբով է եղել մեծ հրապարակախօսի գործունէութիւնը, քարոզիչ եպիսկոպոսը յայտնեց, որ ինքն կամենում է շօշափել այդ գործունէութեան մի ձիւղը միայն, այն է Արծրունու գործունէութիւնը հայոց եկեղեցու վերաբերմամբ: Հասարակութեան մի մասի մէջ, ասաց արքայապետը, այն կարծիքն է տիրում թէ հանդուգնաւ Արծրունին թեթև կերպով էր վերաբերվում հայոց եկեղեցու նշանակութեան, սակայն այդ կարծիքը հիմնովին սխալ է. ընդհանրապէս, ոչ ոք այնքան լաւ կերպով չէր հասկանում հայ եկեղեցու նշանակութիւնը հայ ազգի համար, ոչ ոք այնքան անկեղծ բարեկամ չէր եկեղեցուն և ոչ ոք այնքան ջերմ կերպով չէր ցանկանում այդ եկեղեցու պայծառութիւնը, որքան Գրիգոր Արծրունին: Նա ամենալուրջ կերպով էր վերաբերվում եկեղեցուն, իրեն ազգային մի ամենակարեւոր հաստատութիւն, ուստի և հենց այդ պատճառով նա

կամենում էր, որ հայոց եկեղեցին լինի կենդանի, ունենայ արժանաւոր հոգեբաններ և իր կոչման բարձրութեան վրա լինի կանգնած: Իրեն ապացուց, արքայապետը մատնացող արաւ Գրիգոր Արծրունու մի առաջնորդողի վրա, որ տպւած է «Մշակի» մէջ 1876 թ.ին՝ «Ո՛ր է թըշ նամի, մենք թէ դուք» վերնագրով:

Աւարտելով իր քարոզը, խորհրդային եպիսկոպոս Ստեփանէ յարատեւութիւն մաղթեց Գրիգոր Արծրունու գործը շարունակողներին և ցանկացաւ, որ նրա գաղափարները ընձանուր տալով զանազան հասարակութեան մէջ և կազմակերպվի մի իսկական, հասկացող և իր կոչման բարձրութեան վրա կանգնած հոգեբանականութիւն:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ երեկոյան 7 ժամին Էջմիածնից արտացոսեց հետեւեալ հեռագիրը. «Կաթողիկոսը ճանապարհ ընկաւ:

Երէկ երեկոյան 8 ժամին Երևանից մեր թըղթակցից ատացածք հետեւեալ հեռագիրը. «Կաթողիկոսը հասաւ այստեղ»:

Կ. Պոլսից մեզ գրում են. «Փոփոխ» լրագիրը տպագրական տեսչութեան կողմից անպայման կերպով դադարման դատապարտված է: Պաշտօնագրի մէջ ասված է հետեւեալ. «Հայերէն «Փոփոխ» լրագիրը պատուէններու և կանոններու հակառակ շարժած ըլլալով, այսօրուէն սկսեալ անպայման կերպով դադարման դատապարտուած է»: Ինչ կ'ասած, որ մի բանի շարժելից յետոյ նորից կը թույլատրվի այդ անպայման դադարեցում» լրագիրը: Այդպէս է ամեն բան թիւրբիւրում:

Մեզ հաղորդում են, որ խորհրդային եպիսկոպոս Ստեփանէ անցեալ կիրակի մի քարոզ տուեց Վանքի եկեղեցում, որը վերին աստիճանի լաւ տպաւորութիւն թողեց բազմաթիւ հասարակութեան վրա: Յանկալի է, որ արքայապետը շարունակի քարոզներ խօսել Թիֆլիսի եկեղեցիներում, որ վաղուց ժողովուրդը չէ լսել մի կենդանի և ազդու խօսք:

Արդարադատութեան միջնորդութեան մէջ, մայրաքաղաքի լրագիրներին խօսքով, հարց է յարուցված վերաբերելու հոգեհանգիստին վերաբերեալ օրէնսդրութիւնը: Մտադրութիւն կայ զօրեղացնել այն պատիժները, որոնք սահմանված են հոգեհանգիստի համար:

Շաբաթ, ամսիս 17-ին, Թիֆլիսի ժողովարանում կայացաւ հրէաների բարեգործական ընկերութեան երեկոյնը, որը ամբողջապէս բաղկացած էր երգերից և գրականական մասերից: Կոնցերտին մասնակցողներից աչքողութիւն ունեցան տիկ. Բալաբանովա և պ. Դավիթով, որոնցից առաջինը երգեց Չայկովսկու «ДЕНЬ ЛН ЦАРИТЬ», իսկ երկրորդը նոյն Չայկովսկու Եգեմի Օնգելի, իսկ կրկնութեանը Տօտիի Voxrei morit: Գրողներէն զկարգաց մի քանի ոտանաւորներ: Երեկոյնը բաղմամբ էր և անցաւ ուրախ:

Հայ դերասանների և դերասանուհիների մի խումբ, այն է Արէլեան, Արաքեան, Սարգսեան, Կիկին Զարէլ, օր. Ախաչեան և մի քանի ուրիշները մտադրութիւն ունեն մի շարք ներկայացումներ տալ Բագուում և զաւառական ուրիշ քաղաքներում:

Այսօր Թիֆլիսի արքունական թատրոնում տրվելու է մի ներկայացում յօդուտ Հայունհաց վերաբերմամբ: Հասարակութեան մի մասի մէջ, ասաց արքայապետը, այն կարծիքն է տիրում թէ հանդուգնաւ Արծրունին թեթև կերպով էր վերաբերվում հայոց եկեղեցու նշանակութեան, սակայն այդ կարծիքը հիմնովին սխալ է. ընդհանրապէս, ոչ ոք այնքան լաւ կերպով չէր հասկանում հայ եկեղեցու նշանակութիւնը հայ ազգի համար, ոչ ոք այնքան անկեղծ բարեկամ չէր եկեղեցուն և ոչ ոք այնքան ջերմ կերպով չէր ցանկանում այդ եկեղեցու պայծառութիւնը, որքան Գրիգոր Արծրունին: Նա ամենալուրջ կերպով էր վերաբերվում եկեղեցուն, իրեն ազգային մի ամենակարեւոր հաստատութիւն, ուստի և հենց այդ պատճառով նա

Եկեղեցիները բնակիչ պ. Սարգիս Խարազիկեանը նուրից «Մշակի» 1895 թ.ի մի օրինակ Եկեղեցիներում հայոց ծխական դպրոցին:

Մեր խմբագրութեան մէջ ատացվեց Էջմիածնի միաբան Գալուստ Տէր-Մկրտչեանի «Հայկական» անունով գրքից, որ ամբողջում է իր մէջ այն

մի շարք յօդուածներ, որ հեղինակը տպագրում էր «Արարատ» ամսագրի 1894 թ.ի համարին: Դրոյցի նիւթը վերաբերում է զխառարակ Մովսէս Խորենացու և ուրիշ հեղինակների գրած գրքերի մէջ պատահող մոթ և վիճելի տեսչերի քննութեան և լացատրութեան:

Այսօր, երեքշաբթի, ամսիս 20-ին, երեկոյան կը կայանայ Կայսերական Կովկասեան Կիւզաստանական ընկերութեան նիստը, որի պարագայում ընդհանրապէս 1) Ընթացիկ գործեր, 2) Ա. Քալանթարի ղեկուցումը՝ գիտական ժողովները ապահովեցնելու և կազմելու համար ուսաց ընկերակցութեան կանոնադրութեան քննութեան մասին և 3) Լիսնեվսկու ղեկուցումը անտառապահական օրէնքի գործադրութեան մասին Անգլիոյ կառավարող են ներկայ լինել և կողմնակի անձինք: Սկիզբը 7½ ժամին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԳԻՐ

Տեսնելով Անգլիայի եւսագրող հոգեբան Հայաստանի վերաբերեալ Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը իրագործելու առիթով, «Journal des Debats» լրագիրը արդարացի կերպով նկատում է, որ Անգլիան պարտաւոր է ուշադրութիւն դարձնել նոյն դաշնագրի և ուրիշ յօդուածների վրա, որոնք խախտվում են ամենամասնական կերպով: Յիշատի, չը խօսելով արդէն բոլորական և բոսնիո հերցեգովինական հարցերի մասին, որոնք չօշափում են Թիւրքիայի և Ռուսաստանի շահերը, կան Բերլինի դաշնագրի և մի քանի ուրիշ յօդուածներ, որոնք իրագործման վրա լուսաւորված Նիսպան ոչինչ ուշադրութիւն չէ դարձնում: Ժամանակ է, որ անգլիական զաւորները ուշադրութիւն դարձնեն Բերլինի դաշնագրի վրա իր ամբողջութեամբ:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍԻԱՅԻՑ

Կ. Պոլսի, ղեկտեմբերի 8-ին
Չորեքշաբթի, ղեկտեմբերի 7-ին, տեղի ունեցաւ հայոց պատրիարքի ընտրութիւնը: Ժողովը գումարվեց մայր եկեղեցու մէջ, նախագահութեամբ տեղապահ եպիսկոպոսի, ներկայութեամբ 76 ժողովականներու:

Նախագահը ժողովը բացեց մի կարճ ճառով, յոյս յայտնելով, որ ընտրողները խղճի կատարեալ գիտակցութեամբ պիտի կատարեն պատրիարքի ընտրութիւնը: Ապա տեղի ունեցաւ մայր-ղիւնի ընտրութիւնը: Չայնրի առաւելութեամբ առաջին ատենապետ ընտրվեց Գաբրիէլ էֆենդի Նո. րատունիկան, իսկ երկրորդ ատենապետ՝ Ռէթէոս էֆ. Պերպերեան:

Երբ կարգացվեց պատրիարքական տեղապահի գրութիւնը՝ ուղղած ժողովի ատենապետին, ձեռնարկվեց պատրիարքական ընտրութեան: Ընտրութեան արդիւնքն է, 76 քուէի մասնակցութեամբ՝

Մատթէոս եպիսկոպոս Իսմիրեան՝ 67 քուէ, Բարդուղիմէոս եպիսկոպոս՝ 3 քուէ, Դևոնդ եպիսկոպոս Շիշմանեան՝ 2 քուէ, Հմայեակ եպիսկոպոս Գիմաքեան՝ 2 քուէ, Պաւրոս եպիսկոպոս, առաջնորդ Սըվազի՝ 1 քուէ:

Հետեւեալ քուէների անգին առաւելութեամբ Թիւրքիայի հայոց պատրիարք ընտրվեց Մատթէոս եպիսկոպոս Իսմիրեան: Ընտրութիւնը ընդունվեց ըստ ծախսարկութեան:

Ժողովի որոշմամբ մի պատգամաւորութիւն գնաց Խիլիտար, Խիլիլեանի բնակարանը, ծանուցանելու ընտրութեան մասին:

Արքայապետը շնորհակալութիւն յայտնեց ազգին կողմէ իրեն ցուց տուած վստահութեան համար, և ըսաւ թէ սիրով կընդունի իրեն տրուած պաշտօնը:

Պատրիարքական ընտրութեան թուղթը ներկայացված է արդէն մեծ-կայսրըսին:

Պ—ի

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍԻԱՅԻՑ

Տրապիզոն, ղեկտեմբերի 12-ին
Անցեալ նամակով հաղորդեցինք, որ ամեն տեսակ գողեր և սրիկաներ պահապան նշանակվեցան, զխառարակեալ հայերի վրա վայր պահապաններուն զիւր չեկող հային. մէկ զբաղաւորութիւն

մը՝ իսկոյն բանտ: Ո՞վ է հարցնող, ո՞վ է փնտռող: Առաջին շարժումն իսկ ընտանիքի տէր հայ արհեստագործ մը զիշերը ժամը 2-ին (ըստ թրքականի) չուղեւով պատասխանել պահապաններու անտեղի հարցումներուն, 8 օր բանտարկուեցաւ և 50 զրուշ տուգանք տալէ յետոյ միայն արձակվեցաւ:

Տեղիս հայունհաց բարեգործական ընկերութիւնը ամեն տարի Դեմիտի տունէն առաջ վիճակախաղ կը սարքէ և անոր հասոյթով երկու սեռի աղքատ աշակերտաց հազուստ, կոչիկ կընձեռէ: Այս տարի վիճակահանութեան տուները հրապարակ հանուելուն պէս գրավեցան կառավարութիւնէ և վիճակախաղը արգելուեցաւ:

Վերջին օրերս ազգային վարժարաններու ուսուցիչներէն մէկ երկուսին տունը խուզարկեցին և փոստատնէն նամակը առին, առանց երեակայածնին գտնելու: Վարժարանի փոքր տղայոց մէկ քանիսն ձեռքէն դատադրեցին գրուեցին և խեղճ մանկիկները հարցաքննեցին, որոնցմէ ոմանք վարկերուն հիւանդացան, իսկ միւսներն կը վարկան դպրոց երթալ:

Յայտնի է, որ Տրապիզոնի հայը շատ երկչու է. ասկայն Տրապիզոնի հայը իր երկչոտութեամբ իսկ մեծ վախ կազդէ կառավարութեան, որ չը բաւականանալով իր բազմաթիւ զինուորներով, լրտեսներով, ամեն օր առիթ չը փախցնէր թիւրք խուժանը, որ բնաւ տարբերում չէ անցած դարերէ յետոյ, կը յուզուի, կը կատորի և կը զինուոր հայերուն դէմ: Եթէ այսպէս տեսէ, քիչ ատենէն Տաւրիսյան տանի ամեն մի հայաբնակ անկիւնից կը լսէ Սասնոյ կոտորածի-նման վայրագ և գաղանային ոճիրներ:

Ֆրանսական լեզուի տարածման աշխատող ընկերութեան Ալիանս-Ֆրանսէզիս Կ. Պոլսոյ մասնաճիւղը այս տարուանէ սկսեալ բարեհաճած է Տրապիզոնի հայ վարժարաններու մէջ Ֆրանսերէն լեզուի ուսուցման համար մի ֆրանսացի ուսուցիչ ուղարկել: Ասօր տարեթոյական 1300 ֆրանկը յիշեալ ընկերութիւնը և 500 ֆրանկը ազգային անուոկը պիտի վճարէ: Ուսուցիչ պ. Վալէրի վերջերս երկու եւրոպացիներու հետ տուն մը կը վարձէ Ֆրէնկհայթ թաղին մէջ:

Նոյեմբերի 27-ին, կիրակի երեկոյին, երբ ուրիշ մէկ երկու բարեկամներու հետ ճաշի սեղանի շուրջը բոլորած կը խօսակցէին, յանկարծակի տան դուռը կը բացուի և նշանաւոր քրիկայ Քեանդլի Գալիպ պէյ սենեակէն ներս կը մտնէ, իր հետ ունենալով թիւրք մը և լատին մը, որուն ստիպած էր դալ տան տեղը ցոյց տալ: Ներկայ եղողները բոլորն ալ կը սարսափին այս անկող հիւրէն: Միակ ֆրանսացին դուռ կենէ սենեակէն և կանչելով իր մօտ լատինը, կը բարկանայ թէ ինչ խելով և դիտաւորութեամբ այս երկու թիւրքերը իր տունը բերած է. խօսքը չը վերջացուցած Գալիպ պէյ վրա կը հանի և սաստկապէս մղուրակելով խեղճ ֆրանսիացին, ուղղվելը կը հանէ սպանելու մտադրութեամբ: Ամբիւրպէս տեսցիները օղնութեան կը վազեն և հազար մէկ աղաչանքով պատուական հիւրը կը հանգնեն տունէն մեկնել:

Հետեւեալ օրը անմիջապէս կուսակալին բողոքեցին, որ թիւրքական կեղծաւորութեամբ բարկացաւ, փրփրեցաւ, բայց բողոքողները ճամբէն յետոյ, ոչ մի միջոց ձեռք առաւ քրիկային դէմ, որ ուղղվելը մէջքը կախած իրեն նմաններու վահանի մը հետ աղաւ համարձակ կը պտտի քաղաքին մէջ մինչև օրս: Բարեկամները խորհուրդ տուած են ֆրանսացիին որ չը կրկնէ բողոքը, որովհետեւ Գալիպ պէյ և իր նմաններ կառավարութեան դատնի աջակցութիւնը վայելելով՝ վաղ կամ անաղան կարող են սպանել զինքը և անպատիժ մնալ կամ շատ շատ փախուստ տալ: Պէտք է ըսել որ Գալիպ պէյի և յիշեալ ուսուցչին մէջ ոչ մի ծանօթութիւն, կապ կար, այլ միայն թիւրք պէյը կը կասկածի եղեր թէ սիրուհի կը պահեն տան մէջ:

Հանգստութիւնն և ապահովութիւնն կենացու, դայս առակ լուսաւոր:

S

117—130 (2.)